ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի, Հեռ.
(0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

N 330
25 *հոկտեմբեր 2019թ.*

«ՁԱՏԵԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ս. ԻԶՄԱԻԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Իզմաիլյան,

Սույնով ծանուցվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի և «Ձատեգ» ՍՊԸ-ի միջև 2019թ. ապրիլի 30-ին կնքված «Պետության կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման» թիվ «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2019/1 ՄՏ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն պետք է կատարեր շինարարական աշխատանքներ, սակայն խախտել է պայմանագրի պայմանները:Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի գ ենթակետը ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանը 2019 թվականի հոկտեմբերի 25-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ «Ձատեգ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 124,004 (մեկ հարյուր քսանչորս հազար չորս) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանք:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի համայնքապետարանի կողմից որպես պայմանագրի կատարման ապահովում, «Ձատեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ վճարման պահանջագրում նշված 2,480,070 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար յոթանասուն) ՀՀ դրամը սահմանված կարգով և

ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՐԴԱՆՔՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՐՋՈԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ